

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԿԱՐԻՆԵ ԱՍՐՅԱՆ

Վերջին տարիներին ցանկացած պետության ընդհանուր ներքին ու արտաքին շուկաներում առաջնադասման, տնտեսության և այլ ոլորտներում զարգացման ու անվտանգային խնդիրների լուծման համար մեծ կարևորություն է տրվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը և զարգացմանը: Տեղեկատվական տեխնոլոգիաների թվայնացման գործընթացները ռազմավարական կարևոր նշանակություն ունեն աշխարհի բոլոր երկրների, այդ թվում Հայաստանի համար, քանզի ժամանակակից աշխարհում երկրների ներքին գործընթացների օպտիմալ զարգացման ընթացքի և համաշխարհային տնտեսության մեջ առավել սերտ ինտեգրման ու համագործակցության անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում: Ուստի թվայնացման միտումներին զուգընթաց քայլերը, միջազգային ստանդարտներին համապատասխանեցվածության ապահովումը պետության մրցունակության բարձրացման և անվտանգության ապահովման կարևորագույն գործիքներից են: Այդ իսկ պատճառով ցանկացած պետության առաջնահերթություններից են բարձր տեխնոլոգիաների զարգացումն ու տարածումը ներքին ու արտաքին միջավայրերում:

Այս համատեքստում հատուկ կարևորություն է ստանում տնտեսության մեջ և բիզնես հատվածում, հանրային կառավարման և քաղաքացիների կենցաղում տարբեր գործառույթների թվայնացման անհրաժեշտությունը: Հետևաբար տնտեսության թվայնացման ուղղությամբ իրականացվելիք միջոցառումներից առաջնահերթ են կիրառանվտանգության ուժեղացման գծով աշխատանքները, ինչպես նաև անվտանգ թվային միջավայրի ստեղծումը փոխանցվող տեղեկատվության գաղտնիության ապահովմամբ: Այս գործընթացի զլխավոր համակարգող պետական մարմինը տրամաբանորեն պետք է լինի ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը ֆինանսական, տեխնոլոգիական, կադրային և այլ համապատասխան ռեսուրսների ապահովմամբ: Հողվածում առաջարկվում է նաև բացատրական և ուսուցողական պատշաճ աշխատանք ծավալել հասարակության բոլոր շահագրգիռ կողմերի համար տնտեսական գործառույթների և բիզնեսի թվայնացման վերաբերյալ, այդ թվում տնտեսավարող սուբյեկտների համար՝ ի դեմս հատկապես արտահանող և ներկրող ընկերությունների, որոնք էական ազդեցություն ունեն երկրի ՀՆԱ-ի և պետական եկամուտների կազմավորման գործում:

Բանալի բառեր – թվայնացման ռազմավարություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տնտեսության թվայնացում, թվային բիզնես, կիրառանվտանգություն, էլեկտրոնային ծառայություններ, հանրային էլեկտրոնային կառավարում

Էլեկտրոնային տեխնոլոգիաների արդյունավետ ներդրման միջազգային փորձը

Էլեկտրոնային առևտրի զարգացման, բիզնեսի հաստատման և զարգացման և տնտեսության մեջ էլեկտրոնային տեխնոլոգիաների արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փորձը: Մասնավորապես, Գերմանիան այսպես կոչված «Արդյունաբերություն 4.0» ծրագրի իրագործմամբ 2030 թ.-ին արդեն ամբողջությամբ անցած կլինի թվայնացված արդյունաբերությանը: Պետք է նշել, որ զարգացած այլ երկրներում գերմանական այս նախաձեռնությունը նպաստել է համանման ծրագրերի ընդունմանը. Նիդերլանդներում («Smart Factory»), Ֆրանսիայում («Alliance Industrie du Futur»), Միացյալ Թագավորությունում («High Value 18»), Իտալիայում («Fabbrica del Futuro») և Բելգիայում («Made Different»)՝¹⁹ նախագծեր են մշակվել ու իրականացվում:

ԱՄՆ-ում թվային տեխնոլոգիաների խոշոր ներթափանցումը տնտեսության ոլորտ հնարավոր է դարձել 2014 թ.՝ Արդյունաբերական համացանցի կոնսոցիումի ստեղծմամբ: Արդեն 2016 թ. գործարկվել է «Թվային տնտեսության օրակարգ» (Digital Economy Agenda) ծրագիրը: Նախատեսվում են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով՝ ազատ և բաց համացանց, նորարարություններ և նոր տեխնոլոգիաներ, հասանելիություն և հմտություններ, ցանցում վստահության և անվտանգության ապահովում: Թվայնացման ամերիկյան ծրագիրն ուղղված է մրցակցող ընկերությունների միջև սերտ փոխգործակցության ձևավորմանը՝ առավել որակյալ ապրանքների և ծառայությունների ստեղծման նպատակով:

Ճապոնիայի տնտեսության թվայնացումը շատ ցածր մակարդակի է, թեև այս երկիրը ունի աշխարհում 3-րդ տնտեսության կարգավիճակ: Այն թվայնացման տեմպերով զբաղեցնում է 28-րդ տեղը աշխարհում: Հիմնական խնդիրներից մեկը աշխատանքային կադրերի պակասն է այս ոլորտում, պետության և ձեռնարկությունների մատուցած թվային ծառայությունների ցածր մակարդակը, այդ թվում մոբայլբանկինգը, տեղեկատվական առողջապահությունը, պետությանն առնչվող գործարքները, ինչպես նաև թվային ենթակառուցվածքի թերզարգացությունը, սմարթ տեխնոլոգիաների քիչ տարածվածությունը խոշոր քաղաքներում և այլն: Թվայնացման գործընթացները խոշոր տեմպերով ընթանում են մեքենայաշինության ոլորտում՝ ավտոմատացման և ռոբոտաշինության հաշվին: Հակառակ պատկերն է ֆինանսների և ապահովագրության, պետական ծառայությունների մատուցման, առողջապահության և էներգետիկայի ոլորտներում: Երբ փորձում են խորքային

¹ Տե՛ս Հ. Մարգյան, Ռ. Գևորգյան, Կ. Մինասյան, Ժ. Մխիթարյան, Հ. Զաքարյան, «ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները», Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջ 20-21:

վերլուծությունն անել այս բարգավաճող երկրում թվայնացման գործընթացների այսքան ցածր վիճակի վերաբերյալ, կառավարությունը առաջ է քաշում այն վարկածը, որ ճապոնական բիզնեսը էական տարբերությունները բիզնես պրոցեսների և թվային տրանսֆորմացիաների միջև չի հասկանում, իսկ հենց ձեռնարկությունների 53,1%-ը որպես հիմնական խոչնդոտ նշում է թվային կադրերի բացակայությունը: Համեմատության համար ասենք, որ ԱՄՆ-ում դա 27,2% է, Գերմանիայում՝ 31,7%: Մյուս արգելակող գործոններից են ֆինանսական ռեսուրսների պակասը (26,9%), աշխատակիցների դեմ լինելը ռեֆորմներին (20,1%), անվստահությունը թվայնացման նպատակահարմարության մեջ (23,8%) և այլն²:

ՀՀ տնտեսության թվայնացման ռազմավարության շուրջ

Ժամանակի հրամայականը թելադրում է պետության անմիջական մասնակցությամբ թվայնացման գործընթացների կազմակերպում՝ պետություն-հասարակություն սերտ համագործակցությամբ և ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը նպաստող բազմաթիվ միջոցառումների կիրառմամբ: Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը մշակել և ընդունել է «2021-2025 թթ. Հայաստանի թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագիր»-ը՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Պետական կառավարում և պետական կառավարման ներքին համակարգի թվայնացում,
2. Տնտեսություն,
3. Հասարակություն³:

Այժմ անդրադառնանք տնտեսության բնագավառում թվայնացման հիմնական ուղղություններին և դրանց իրականացման գործընթացներին:

Համաձայն Հայաստանի թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագրի՝ տնտեսության բնագավառում նախատեսված են միջոցառումների հետևյալ 5 բաժինները.

1. Թվային տեխնոլոգիաների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում մասնավոր հատվածում,
2. Թվային լուծումների օգտագործման խրախուսման ծրագիր,
3. Թվային բիզնեսի վերաբերյալ օրենսդրության վերանայում,
4. Էլեկտրոնային առևտրի կազմակերպման խրախուսում և խոչընդոտների վերացում,

² Տե՛ս Доклад «Present Status and Challenges...», 2021», Современные финансовые технологии в Японии, под ред. С. Белозерова, Е.Соколовской, 2023, էջ 41-56:

³ Տե՛ս ՀՀ Կառավարության որոշում, 11 փետրվարի 2021 թվականի N 183-Լ, «Հայաստանի թվայնացման ռազմավարությունը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին»:

5. Արդյունաբերության թվայնացում:

Մեր երկրում որպես առաջնահերթություն նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը (թվայնացումը), մասնավորապես՝ ՀՀ պետական կառավարման համակարգում նորարարական տեխնոլոգիաների, կիրառական տեխնոլոգիաների, տվյալների քաղաքականության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական ստանդարտների և թվայնացված միջավայրի ստեղծում, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածում թվային տեխնոլոգիաների կիրառմանը նպաստող նախաձեռնությունների և հասարակության կողմից էլեկտրոնային գործիքների օգտագործումը խթանող ծրագրերի մշակում և իրականացում: Այս տեխնոլոգիաների մշակման, ներդրման և աշխատանքների համակարգման համար պատասխանատու է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը:

Թվայնացման ռազմավարությունը կոչված է նպաստելու պետական ծառայությունների մատուցման բարձր որակի ապահովմանը, պետական կառավարման համակարգի արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, կապի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, մասնավոր ոլորտի մրցունակության բարձրացմանը, տնտեսական աճի համար անհրաժեշտ թվայնացման որոշումների կայացմանը: ՀՀ թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագրում սահմանված են այն գործիքները, որոնք առաջիկա 5 տարիներին ընթացքում պետական կառավարման ոլորտում կստեղծեն էլեկտրոնային կառավարման հուսալի մոդել և ՀՀ պետական ծառայությունների թվայնացման գործընթացների ինստիտուցիոնալ կատարելագործման հիմքը:

Տնտեսության թվայնացման ներկա իրավիճակի վերլուծություն

Հայաստանի համալիր զարգացման համար մշակված վերոհիշյալ ռազմավարական քայլերի հաջող իրականացումը կարող է էապես նպաստել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի և հասանելիության բարելավմանը, պետական կառավարման ու տնտեսության արդյունավետության բարձրացմանը էլեկտրոնային առևտրային հարթակներում առևտրի ծավալների և արագության մեծացման ու առևտրային գործունեության նոր տեսակների առաջացման: Այս գործընթացներում կարևոր դեր է խաղում թվային տեխնոլոգիաների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության և մարդկանց առօրյայում վերջիններիս ներդրման գործընթացի պատշաճ ապահովումը:

Թվայնացման հիմնարար պայմանների ապահովումը ստեղծելու է

անհրաժեշտ միջավայր Հայաստանի թվայնացման ռազմավարությունը 2021-2025 թթ. իրականություն դարձնելու համար: Թվայնացման հիմնարար պայմանները են.

1. Կիբեռանվտանգություն,
2. Տվյալների քաղաքականություն,
3. Ենթակառուցվածքներ՝ շարժական, լայնաշերտ կապի և կառավարման ամպային ծառայություններ (տվյալների կենտրոն),
4. Կրթություն՝ թվային հմտություններ,
5. Օրենսդրական դաշտ:

Թվայնացման ռազմավարական ուղղությունները Հայաստանի տնտեսությունում և բիզնես միջավայրում

Մշակված ռազմավարության համաձայն՝ կիրականացվի միջոցառումների արշավ մասնավոր ոլորտում իրագրվածության բարձրացման նպատակով, որն ուղղված կլինի նորարարական լուծումների, մտածողության և թվային գործիքների առավելագույնս ներդրմանը այս հատվածում: Այդ աշխատանքները խրախուսելու, մոտիվացնելու և լավագույն փորձն ու հմտությունները բոլոր շահագրգիռ կողմերին փոխանցելու նպատակով ներգրավվում են տեխնոլոգիական ոլորտի առաջատար մասնագետները, ձեռներեցները, մենթորները և այլն: Մշակվել է նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման համար տնտեսավարողներին խրախուսող ծրագիր, որի համաձայն՝ կստեղծվեն օրենսդրական խթաններ, կմատուցվեն խորհրդատվական ծառայություններ, մասնագիտական հարթակների ստեղծմամբ՝ աջակցության միջոցառումներ և այլն: Իսկ ՓՄՁ-ներում թվային լուծումների օգտագործումը խրախուսելու նպատակով նախատեսված է պետական ամպային հարթակի վրա տրամադրել SaaS տիպային ավտոմատացված լուծումների տարածք (հաշվապահություն, մարդկային ռեսուրսների կառավարում, պահեստի կառավարում և այլն)՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով թվային գործիքներով:

Տնտեսության և մասնավոր բիզնես հատվածում տեղեկատվական տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման որոշ ձևերի կիրառումը պահանջում է նաև թվային բիզնեսի վերաբերյալ օրենսդրության վերանայում: Այս նախաձեռնության շրջանակներում կիրականացվի առկա օրենսդրական դաշտի խնդիրների վերհանում, ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրություն, որի արդյունքում կմշակվեն մեխանիզմներ՝ հնարավորություն տալով ստեղծելու արագ զարգացող թվային տնտեսությանը համապատասխանող կարգավորիչ և օրենսդրական դաշտ: Հատկապես կկարևորվի վերանայված համակարգի ճկունությունը՝ ապահովելու գործընթացների շարունակականությունը, ինչպես նաև հատուկ ուշադրություն կդարձվի անձնական տվյալների պաշտպանությանն ու անվտանգությանը, մտավոր սեփականության իրավունքներին, էլեկտրոնային առևտրի կազմակերպման խրախուսմանը

և խոչընդոտների վերացմանը և այլ կարևոր հարակից միջոցառումներ ու իրականացվելիք քայլեր⁴:

Միասնական թվային շուկաներին ինտեգրում՝ տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում ապահովելու համար, ինչպես նաև Հայաստանի թվային տնտեսության մրցունակությունը զուրպալ համատեքստում բարձրացնելու համար նախատեսված է պարբերական վերլուծություններ կատարել ԵԱՏՄ (Եվրասիական տնտեսական միություն), ԱլԳ (Արևելյան գործընկերություն), ԵՄ (Եվրոպական միություն) և Միջին Արևելքի երկրներում թվային զարգացման դինամիկայի, սահմանված սկզբունքների և չափանիշների վերաբերյալ:

Թվայնացման ռազմավարության կիրառման օգուտները Հայաստանի տնտեսության համար, այդ թվում՝ ԵԱՏՄ երկրների և համաշխարհային գլոբալ շուկաների հետ թվային տարածքի ինտեգրման գործընթացներից

Անդրադառնալով թվային տեխնոլոգիաների կիրառման ռազմավարության առավելություններին տնտեսական բաղադրիչի մեջ, մասնավորապես բիզնես հատվածում, նշենք, որ սմարթ լուծումների կիրառումը կնպաստի թե՛ արտադրության մեջ տարբեր պրոցեսների օպտիմալացմանը և ծախսերի կրճատմանը, թե՛ արտադրված ապրանքների ու ծառայությունների մրցունակության բարձրացմանը ներքին և արտաքին շուկաներում, բիզնես-սպառող կապի արդյունավետության և արագության բարձրացմանը, ինչպես նաև նորաստեղծ ընկերությունների գրանցման, ստեղծման և ավելի արագ ինտեգրման գործընթացների կազմակերպմանն ու իրականացմանը: Այս ճանապարհին կարևորվում է նաև էլեկտրոնային կառավարման վերաբերյալ իրագրելիության մակարդակի բարձրացման հարցը մասնավոր հատվածում: Տնտեսության թվայնացումը կարող է ստեղծել հսկայական հարթակ մեր ձեռներեցների համար՝ նյութական ապրանք արտադրողների, և ծառայություններ մատուցողների համար, որը նրանց հնարավորություն կընձեռնի դուրս գալու իրենց առաջարկներով համընդհանուր տնտեսական շուկա և զգալիորեն մեծացնելու վաճառքները: Հատկապես դա արդիական է գյուղատնտեսության, արդյունաբերության, կրթության և առողջապահության ոլորտների համար: Այն հնարավորություն է ընձեռում կիրառելու նոր բիզնես մոդելներ զարգացող երկրների ձեռներեցների և փոքր ու միջին ձեռնարկությունների համար⁵:

Հայաստանի համար առաջնային խնդիրներից է եվրասիական ինտեգրման տարածքում միասնական էլեկտրոնային միջավայրի ձևա-

⁴ Տե՛ս 22 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, «Թվայնացման ռազմավարական ուղղություններ»:

⁵ Տե՛ս World Investment Report 2017. Investment and the Digital Economy, United Nations Conference on Trade and Development, Geneva, 2019, p. 156, // URL: https://unctad.org/system/files/official-document/wir2017_en.pdf, 06.11.2020:

վորումը, որի մեջ առավել կարևորվում են տեղեկատվության փոխանակման միջպետական համակարգի գործիքակազմը, ինտեգրման արդյունավետ սխեմաների մշակումն ու կիրառումը՝ կիրեռանվտանգության կանոնների պահպանմամբ և քաղաքական, բյուրոկրատական խոչնդոտների հաղթահարմամբ⁶:

Ենթադրվում է, որ թվային օրակարգի իրագործման հնարավոր տնտեսական էֆեկտը 2025 թվականի դրությամբ ԵԱՏՄ անդամ երկրների համախառն ՀՆԱ-ն կավելացնի է մոտ 11%-ով: Այդ պոտենցիալ էֆեկտը գրեթե երկու անգամ գերազանցում է անդամ երկրների առանց համատեղ թվային օրակարգի իրագործման թվային զարգացման արդյունքում համախառն ՀՆԱ-ի աճի ցուցանիշը: Այս օրակարգի իրագործումը կարող է ապահովել ՏՏ ոլորտում զբաղվածության աճ 66.4%-ով, ինչը գրեթե 50%-ով ավելին է, քան կլինեք առանց նշված օրակարգի իրագործման անդամ պետությունների թվային զարգացման մեջ: Համարվում է, որ այս աճը կապահովի ընդհանուր զբաղվածության լրացուցիչ աճ 2.46%-ով⁷:

Եզրակացություններ և առաջարկներ

Ամփոփելով հողվածը և այս պահին Հայաստանի տնտեսության ու բիզնես հատվածի թվայնացման, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների և համաշխարհային գլոբալ շուկաների հետ թվային տարածքի ինտեգրման գործընթացների միտումը՝ պետք է նշել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները.

1. Հողվածում ներկայացվել են ՀՀ տնտեսության թվայնացման զարգացմանն ուղղված ՀՀ պետական ռազմավարության հիմնական ուղղությունները և իրականացված քայլերը՝ ի դեմս ՀՀ կառավարության մշակած և ընդունված 2021-2025 թթ. թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագրի և դրանից բխող միջոցառումների:

2. Հաշվի առնելով միջազգային դոմոր կազմակերպությունների հետ գործակցության ներկայիս փորձը և ՏՏ ոլորտում անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների ներդրումների ոչ բավարար ծավալը, առաջարկում ենք այդ ուղղությամբ կոնկրետ քայլերն ու նախագծերը ավելի մեծ թափով առաջխաղացնել և դրա համար ստեղծել նեղ մասնագիտական խմբեր, այդ թվում՝ ոչ պետական կառույցներից ներգրավված մասնագետներով: Այս մասնագետների հիմնական խնդիրը կլինի պատշաճ ներկայացնել առկա խնդիրները դոմոր կառույցներին, որոնց աջակցությամբ կարող են վերապատրաստվել օրեց մեծ թափ առնող կիրեռանցագործությունների դեմ պայքարող մասնագետներ, ներդրվել թվայնացման տեխնիկական բարձր հուսալիություն ունեցող պրոտոկոլներ, կազմակերպվել ֆինանսավորման և կրթական մոդուլներ

⁶ Առավել մանրամասն տե՛ս՝ <https://www.smartnation.sg/>

⁷ Տե՛ս նաև «Заявление о цифровой повестке Евразийского экономического союза, 26 декабря 2016 г., էջ 2 // URL: https://docs.eaeunion.org/docs/ru-ru/01413567/ms_12042017, 01.11.2020:

համապատասխան տեխնիկական բազա և սարքավորումներ ձեռք բերելու ու շահագործելու նպատակով:

3. Քանի որ մյուս կարևոր խոչընդոտներից է պետական և միջնորդ այլ կառույցների, ինստիտուցիոնալ օղակների բյուրոկրատական և կազմակերպչական այլ խնդիրների առկայությունը, ինչը էապես դանդաղեցնում է թվայնացման նոր նախագծերի առաջադրումն ու իրականացումը, ինչպես նաև նվազեցնում է ՀՀ տնտեսության և ձեռնարկչության զարգացման տեմպերն ու միջազգային առևտրային շուկաներին ինտեգրումը, անհրաժեշտ է օպտիմալացնել փաստաթղթաշրջանառությունը և ինֆորմացիոն հոսքերի արագ փոխանցումը բոլոր շահագրգիռ մասնակիցների շրջանում պետություն-մասնագետներ և SS կազմակերպություններ-միջազգային գործընկերներ-տեղական տնտեսավարողներ-հասարակություն շղթայի մեջ:

4. Առաջարկում ենք FSU նախարարության շրջանակներում ստեղծել համապատասխան հատուկ ստորաբաժանում տնտեսության էլեկտրոնային կառավարմանն անցնելու և անհրաժեշտ ֆինանսական, տեխնոլոգիական, կադրային և այլ ռեսուրսներով ապահովելու համար: Այս նույն պետական կառույցի վրա դնել նաև տնտեսության թվայնացման գործընթացի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար կիբեռնանվտանգության հետ կապված միջոցառումների համալիրի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև՝ թվայնացման շղթայում տվյալների գաղտնիության կամ պատշաճ պահպանման գործընթացի ապահովումը, փոխանցման և մշակման ալգորիթմների, կիբեռտարածքների, ռեգերվային պահուստների ստեղծման համակարգի ներդրումը:

5. Այս ոլորտի թվայնացման աշխատանքները և էլեկտրոնային կառավարման ու համաշխարհային շուկաների հետ միջպետական ու տնտեսավարող սուբյեկտների մակարդակով ինտեգրումն ապահովելու համար առաջարկում ենք իրականացնել տվյալների պահպանման ու կառավարման միջազգային օրենսդրական և տնտեսական դաշտերի պարբերաբար ուսումնասիրություն և համագործակցություն այլ երկրների պետական, տնտեսական և իրավապահ կառույցների հետ: Նրանց փորձի ուսումնասիրությունն և տեղեկատվության փոխանցումը կնպաստեն, որ ստեղծվեն համապատասխան տեխնոլոգիական հարթակներին ինտեգրվելու կառավարման ալգորիթմներ կիբեռնանցագործությունները բացահայտելու ու դրանց հակազդելու նպատակով:

6. Ներկրող և արտահանող տնտեսավարող սուբյեկտների գործունեության թվայնացման համար, որի շնորհիվ, ինչպես արդեն նշվել է, կավելանան Հայաստանի ընդհանուր եկամտային բազան, համախառն ներքին արդյունքը և ֆինանսական հոսքերի թափանցիկությունը, առաջարկում ենք ապահովել պատշաճ բացատրական, ուսուց-

ղական և այլ աշակերտ պետական միջոցառումներ և խթանող արտոն-
նութուններ:

КАРИНЕ АСРЯН – *Процесс цифровизации экономики Армении в контексте государственной стратегии.* – В последние годы в процессе продвижения любого государства на внутреннем и внешних рынках, а также развития в области экономики и других сферах деятельности, в том числе при решении вопросов безопасности страны, огромное значение придается внедрению и распространению информационных технологий (ИТ). Развитие ИТ и процессы цифровизации в современном мире имеют стратегическое значение для любой страны, в том числе Армении, так как создают предпосылки для оптимального развития внутренних процессов государства и его интеграции с другими странами с целью сотрудничества в различных отраслях. Следовательно, учитывая тенденции цифровизации экономики, обеспечение соответствия международным стандартам является важным инструментом повышения конкурентноспособности и обеспечения безопасности страны. Исходя из этого, одним из приоритетов для любого государства является развитие информационных технологий и их применение во внутреннем и внешнем пространстве. Особую значимость в этом контексте приобретает необходимость цифровизации различных процессов и операций в секторах экономики, бизнеса, государственного управления и общественных услуг. С этой целью, среди необходимых мероприятий, предложенных в данной статье, по обеспечению цифровизации экономики, является усиление мер кибербезопасности в процессе передачи данных согласно разработанным протоколам и созданию соответствующей безопасной цифровой среды для соблюдения конфиденциальности передаваемых данных. Логически, главным координатором и ответственным государственным органом всего этого процесса цифровизации должно быть Министерство Высокотехнологий РА с соответствующим обеспечением финансовых, технологических, кадровых и других ресурсов. Далее в статье предлагается обеспечение необходимой разъяснительной и обучающей работы для широких слоев общества и экономических субъектов, являющихся участниками процесса цифровизации, в особенности импортирующие и экспортирующие компании, имеющие значительный вклад в ВВП страны и государственных доходов.

Ключевые слова: *Стратегия цифровизации, информационные технологии, цифровизация экономики, цифровой бизнес, кибербезопасность, электронные услуги, электронное правительство*

KARINE ASRYAN – *The process of digitalization of economy in Armenia in the scope of State Strategy.* – In recent years the process of performance of any country in internal and external markets, as well as development in economic and other sectors, including security issues, the major role plays the application of information technologies (IT). The information technologies and the digitalization process in modern world plays strategic role for every country, including Armenia, because it creates the preconditions for optimal development of internal operating system within the country and its integration with other countries with the aim of co-operation in different spheres. Therefore, taking into account the tendencies of digitalization of economy, provision of measures of conformity with international standards is very important for raising the competitiveness and security of country. Based on this, the

priority for any country is development of IT operations in internal and external environment. Specific significance in this context acquires the necessity of digitalization of different processes and operations in economic and business sector, state governance and public services. For that purpose, in scope of necessary measures stated in this article by author, are the following: a. to strengthen the cybersecurity measures in digital economy building operations in order to provide secure data transfer protocols, to create the systems of correlating cyberenvironment, and confidentiality measures. Logically, the main coordinator and responsible for all this process should be The Ministry of HighTech Industry of RA with the provision of correlated financial, technological, human and other necessary resources. b. it is vital to provide the corresponding trainings and explanative work within the society and governmental structures in order to digitalize and make more transparent the activity of importing and exporting business units, which play significant role in GDP and state revenues.

Key words: *Strategy of digitalization, information technologies, digitalization of economy, digital business, cybersecurity, electronic services, e-governance*